

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Маск“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՏՏՈՒՄ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք արտայայտութիւններ. — Ներքին
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Նամակ Ախալցխայից. Նամակ Շու-
շուից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Խըմ-
բագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹՅՈՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարս-
կաստանից. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԿՈՒԹՅՈՒՆ.
— ԲՈՐՍՍԱ. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. — ԲԱՆԱԿՈՒ-
ԹՅՈՒՆ. Վիճակայի կենսական:

ՏԵՆԴԱՅԻՆ ԱՐՏԱՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի արտասովոր աճուրդ տեղի ունէր
երկու օր շարունակ, փետրվարի 16-ին և
17-ին, Բաղրու մէջ: Աճուրդը վերաբերում
էր պետութեան պատկանող նաւթային
հողերի մի մասին, որ կառավարութիւնը
մրցութեան մէջ էր դրել: Առաջարկված
գններն այնպիսի բարձր աստիճանի հասան,
որոնց մասին նախօրոք դժուար էր նոյն
կին մտածել: Անկասկած, աճուրդի հետե-
ւանքները զգալի ազդեցութիւն պէտք է
անեն նաւթագործական կապիտալների
ընդհանուր վիճակի վրա և փոփոխու-
թիւններ առաջացնեն ամբողջ նաւ-
թային շրջանի բոլորստում:

Կառավարութիւնը աճուրդի էր հանել
Բիբի-Էյրաթի կողմէ նաւթաբեր տե-
ղում 29 կտոր հող, որոնց մէջ պարու-
նակվում է մոտաւորապէս 135 դեցետոն
տարածութիւն: Մրցողները փակած ծը-
րարներով առաջարկում են այն գները, որ
նրանք պատրաստ են տալ նաւթի համար
կառավարութեան: Բարձր գին տուողը ըս-
տանում է գերադասութիւն և վերցնում
է կապալը: Աճուրդից առաջ անհաւատա-
ւի և նոյն-իսկ կատարելապէս փաստաբե-
րի համարում 8 կոպէկ հարկը. բայց ա-
ճուրդի հետեւանքները ցոյց տուին, որ
մրցութեան մասնակցողները նշանակել էին
9—10 և մի դէպքում նոյն իսկ 113/4 կո-
պէկ: Դա այնպիսի գին է, որ միայն մեծ
կապիտալով գործող և մեծ ըրիկով ղեկա-

վարող ընկերութիւններ կարող էին թոյլ
տալ իրանց, որոնք բացի կողմնակի բազ-
մաթիւ հաշիւներից և հանգամանքներից
հաստատ յոյս ունեն նաւթային շա-
տրուանների վրա: Այս բացառիկ գները
վերաբար գներ են, բայց և 5—8 կո-
պէկ գնահատված հողի կտորները ծանր
պարտաւորութիւններ են դնում այն ըն-
կերակցութիւններին վրա, որ ձեռնարկում
են նաւթային արդիւնաբերութիւն այդ
հողերում: Բաւական է, որ նաւթի գինը
վաճառանոցում ընկնի, և ահա միջոնաւոր
գումարների ձեռնարկութիւնները կը հան-
դիպեն սարսափելի ձգնաժամի, որին դի-
մանալու համար անհրաժեշտ է ունենալ
մեծ գումարներ պահեստում:

Անկասկած, նաւթային գործն ունի մեծ
ապագայ: Նաւթի գները եթէ ընկնեն մի
կարծ ժամանակից յետոյ պէտք է դար-
ձնալ բարձրանալու, որովհետեւ նաւթը այ-
ժմ համարվում է ձեռնտու և յարմար
նիւթ ոչ միայն լուսաւորութեան, այլ և
վառելու համար գործարաններում, շոգե-
նաւերում և երկաթուղիներում: Ռուսաս-
տանը զգալի կերպով կորցրել է իր անտա-
ռային հարստութիւնը, իսկ քարածուխը
գնեւ է գնում գնով չէ կարողանում հասնել
գործարանատիրոջ ձեռքը: Հարկաւոր է
վառելիք, և ահա այդ վառելիքը տալիս է
նաւթը մալուխի ձեռք: Մենք հաւա-
տացած ենք, որ նաւթի վաճառանոցը
քանի գնայ, պէտք է լայնանայ և ընդար-
ձակվի, որ մեծացող պահանջը պէտք է
գրգռի որոնել նաւթի նոր աղբիւրներ և
մշակել նաւթային հողերի աւելի մեծ
տարածութիւնը քան այժմ գոյութիւն
ունի. բայց դա չէ նշանակում, որ նաւ-
թային գործի մէջ զգած կապիտալները
չեն փնտրում և բազմաթիւ հարստութիւն-
ներ չեն կորչել: Ամենէին ոչ: Կարող են
տեղի ունենալ մեծ անանկութիւններ և
գործախտութիւններ: Այդ պէտք է աչքի
առաջ ունենան մեր նաւթագործները և

լուրջ կերպով մտածեն այդ մասին: Ան-
կասկած, ընկերակցութիւններով
գործելու եղանակը ապահովութիւններից
մէկն է, որովհետեւ ընկերակցութիւնները
կարող են ունենալ պահեստի գումարներ
և ընդարձակ կրեդիտ ձգնաժամներին դի-
մանալու համար: Ընկերակցութիւնների
միջոցով, փոխադարձ օգնութեան ոյժով,
դեռ կարելի է մաքառել սարսափելի ձա-
խորդութիւնների դէմ և ձեռնարկել քայ-
քայված գործի վերակազմութեան, որ դը-
ժուար իրագործելի է առանձին անհատ-
ների համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԱՆՑԱՅԻՆ

Փետրվարի 14-ին
Կիրակի, փետրվարի 14-ին, քաղաքի հաս-
րակաց գրադարան-ընթերցարանի դահլիճում
կայացաւ հայոց Բարեգործական ընկերութեան
տեղական ճիւղի օրինակաւ ժողովը: Ներկա
էին 25 անդամներ, իսկ նիստի ընթացքում հա-
սաւ մինչև 35-ի: Ժողովը. հերթական հարցերն
էին. — 1) քննել և հաստատել վարչութեան ան-
ցեղալ 1898 թ. ելութեան հաշիւները և իսկ
վերաստուգող յանձնաժողովի զեկուցագիրը:
2) Խորհրդակցել թէ ինչ կերպ յարգել և շնոր-
հակալութիւն յայտնել վարչութեան նախկին
նախագահ Ա. քա. Ղազարեանին, նրա եր-
կարածայ և օգտակար ծառայութեան համար:
3) Նոյնպէս մի բացարձակ շնորհակալութիւն
յայտնել վարչութեան նախկին զանապահ-ան-
դամ պ. Ա. Սիմեօնեանին՝ նրա բաւամբայ գոր-
ծունէութեան համար: 4) Որոշել թէ ինչ կերպ
բաց անել վարչութեան անդամ պ. Ա. Տոնո-
նեանի ծրարած ոտաւայնագործութեան (մանուս-
գործելու) արհեստանոցը և 5) Որոշել թէ զրա-
դարանի տարիներ շարունակ ստացած ինչ լրա-
գիրները, որոնք գրադարանում փչանում են
տեղ չը լինելու պատճառով՝ ինչ անել, ծախել,
թէ ոչ:

Նախագահը, ժողովը բանալով, նախ յայ-

տնեց ժողովին, որ ընկերութեան պատաւոր
անդամ հանդուգեալ Ի. Մլիք-Հայկազեանի յի-
շատակը յարգելու համար, ժողովի որոշած կար-
գադրութիւնները բոլորը կատարված են և, ի
միջի այլոց, մի շնորհակալութեան հեռագիր ևս
ընկերութիւն ստացել է հանդուգեալի այրից:
Յետոյ կարգացվեցին ելութեան հաշիւները,
վերաստուգող յանձնաժողովի զեկուցագիրը և
վարչութեան պատասխանը, որից երևաց, որ
ընկերութիւնը՝ ինչպէս յայտնի է արդէն, ունե-
ցել է մուտք 1532 ռ. 79 կ., իսկ ծախս՝ ընդ ա-
մենը 1477 ռ. 72 կոպ., մնում է ուրեմն առ 1-ն
յուշակարի 1899 թի 57 ռ. 7 կոպէկ: Բացի դրա-
նից վարչութիւնն ունի նոյնպէս կենսական
խորհրդի գրաւարկում յատուկ գումար՝ 1946 ռ.
15 կոպ. իր տոկոսաբեր թղթերով և նոյնպէս
յատուկ գումար՝ 275 ռ. առանձին, որի տոկոսը
ամեն տարի ստացվում է: Վերաստուգող յան-
ձնաժողովի զեկուցագրից երևաց, որ 6 կէտերից
բաղկացած զանցաւորութիւններ են եղել, և ժո-
ղովն ևս արդարացի գտնելով վերաստուգող
յանձնաժողովի նկատողութիւնները՝ որոշեց մի-
ջոյններ գործ դնել այդ զանցաւորութիւնների դէմ:
Ապա ժողովը որոշեց հայր Ղազարեանի բազմա-
մեայ և օգտակար ծառայութեան համար կազ-
մել մի շնորհակալական ուղերձ, տպագրված ոս-
կեղծ տառերով և ընկերութեան կողմից ընծայ-
ել հայր գործիչին. մի և նոյն ժամանակ նոյն
շնորհակալական ուղերձը տպագրել տալ Թիֆլի-
սի հայ լրագիրներում: Իսկ զարկ նոյն վարչու-
թեան անդամ պ. Ա. Սիմեօնեանին՝ ժողովը ոտ-
քի կանգնելով՝ յայտնեց իր շնորհակալութիւնը:

Գալով չորրորդ հարցին՝ այն է մի արհեստա-
նոց բանալ՝ բաւարակեալ և մեծաքանակ թելերից
սրբիչներ, մանուսա և այլն գործելու համար,
որ մեր Ախալցխայի համար հարկաւոր է՝ նա-
խագահը նախ կարգաց վարչութեան անդամ պ.
Ա. Տոնոնեանին այդ ապագայ արհեստանոցի
կազմած ծրարքը, որից երևաց, որ ծախս հար-
կաւոր է սկզբներում մօտ 968 ռուբլի, իսկ այդ
ծախսերի համար առ այժմ աչքի առաջ կայ
մօտ 680 ռուբլի եկամուտ: Ժողովը չը բաւակա-
նանալով միայն պ. Տոնոնեանի ծրարքով, ըն-

որ Դիֆթալի գտնում է իրան համակրողներ,
սքանչացողներ, պաշտպաններ: Այդ նշանակելի
է, ի հարկէ, ոչ գեղարուեստական, հապա պար-
զապէս իբր մտքերի հիւանդագին վիճակի մի
երևոյթ—հոգեբանական, գրեթէ բոլորական տե-
սակէտով. նոյնը կարելի է ասել իր հիւանդների
մասին:
Եւ նոյնպէս հիւանդագին վիճակի արդիւնք է
«GeceSSION» ասված ուղղութիւնը նկարչութեան
մէջ: Նրանց արտաքին պրօպագանդ է պաշտօնա-
կանա պատկերաստեղծութեան հակառակն անել:
Անկախութիւնը գովելու է անուշտ. այդ նկա-
րիչները սակայն անկախութեան ներքե քմահա-
ճոյք են հասկանում: Պորտէտները մէջ իսկ,
— ուր կապիղը ամենից անտեղի է—վառ
գոյները անմիտ մի խառնուրդ են առաջ բե-
րում, որը ոչ նմանութեան, ոչ էլ զեկուցակու-
թեան կողմից հարկաւոր չէ. ընդհակառակն
Տարօրինակ է իրանց իրէպալ: Բակապէս վիպա-
կաններ են: Բնորոշ է միայն այդ անկան ուղ-
ղութեան գտած մօղայի ընդունելութիւնը, ոչ
միայն նկարչութեան, հապա բանաստեղծութեան
մէջ էլ: Լսեցէ հետեւալ ոտանաւորը.

Մի սև միաձի կառ.

Մուկ մի փողոցի մէջ, Բէրլին Վ.

Ձին գլուխը կախած,

Կառապանը

Դիմեաւ իմուն է.

Բարակ

Գալիս է անձրև,

Փողոցը ցուրտ է և ցեխոտ—

Կան ծարղիկ, որոնք զմայլում են այս բա-
ներին—և ահա ճիշդ այդ ընդունում է նրանց:
Մեր մէջ էլ կան, ով չը գիտեր, այդ տեսակ
պօսանքներ և քանդակարներ, և, պարզ է, գեր-
մաններին համար ստած նրանց համար էլ կան-
ցիլ—ձեռնոցի նման:

Ա. Լեւոնյան

ԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱՅԻՆ

ՎԻՃԱԿԱՅԻՆ, փետրվարի 14-ին

Մի տիկին Վիճակայի բարեգործական մի ըն-
կերութեան նախագահ է մի դրօշակ: Ընկերու-
թիւնը որոշում է, այս կիրակի օրը, փետրվարի
12-ին (ն. տ.) դրօշակը եկեղեցին տանել և օր-
նիկ տալ: Հանդէսով և թափօրով գնում են, և
— հոգեւորականները մեր ժողով են օրհնել: Դրօ-
շակի վրա կար թրքական կիսալուսինը և ասու-
ղը: Նուիրատու տիկնոջ և ընդունող ընկերու-
թեան ճաշակի և տակափ պակասը արդարեւ դար-
մանայի է: Մարդ էր անշուշտ նպատակը—տաճիկ
մասիկ՝ ըրիտունեայ եկեղեցիին օրհնել տալ ու-
ղելով: Մեծ գովաստի արժանի է գերման հոգեւո-
րականութիւնը, որ թոյլ չը տուեց այդ ստոր
կատարը:

Վիճակայի դուռայի շէնքին մէջ, ամսիս 11-ին,
բացվեց քաղաքային գինեւորան (Rathauskeller),
Գերման քաղաքների սովորութիւնն է, դուռայի
չինութեան մէջ մասնաւոր գինեւորաններ ունենալ,
որոնք սրահներ, զարդարող պատկերների
գեղեցկութիւնով և ընտիր գինիներովը համբա-
ւաւոր են: Այսպէս են, Բեռլինի և Միւնխենի
քաղաքային գինեւորանները: Առաջինը գրականու-
թեան մէջ էլ ծանօթ է Հաւսթի վէպերովը և
Հէյնէի ոտանաւորներովը: Վիճակայինը գերմա-
նացիներից յետ չի մնայ, աւելի զուարթ է մի-
այն: Վիճակայի հրապոյններից մին է սցիմ, մի
տեսանկեր: Մօղա եղող պատկերազարդ կար-
տեր էլ գինեւորան սրահները ներկայացնող,
պարտաւորված են, և հազարներով ուղղակի-
ցան արդէն աս մի քանի օրվայ միջոցին:

